ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-19-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄՈՍԿՎԱ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024թ. հոկտեմբերի 17-19-ը:

4. Հրավիրող կողմը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու 2024թ. հոկտեմբերի 18-ին կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստին:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների՝ եվրասիական տրանսպորտային միջանցքներում ընդգրկված ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածի, սռնիների բեռնվածության և եզրաչափերի մասին համաձայնագիրը, նավերի առանձին տեսակների հետ կապված Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու, տրանսպորտային միջոցների և ինքնագնաց մեքենաների ու այլ տեսակի սարքավորումների էլեկտրոնային անձնագրերի, Նավագնացության մասին համաձայնագրի, Եվրասիական տնտեսական միության թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորման, Եվրասիական տնտեսական միությունում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների սահմանման և ԵԱՏՄ անդամ պետությունների 2024–2025թթ. մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղենիշների իրականացման միջոցառումների ցանկի վերաբերյալ թեմաները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների՝ եվրասիական տրանսպորտային միջանցքներում ընդգրկված ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածի, սռնիների բեռնվածության և եզրաչափերի մասին համաձայնագրին, նավերի առանձին տեսակների հետ կապված Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելուն, տրանսպորտային միջոցների և ինքնագնաց մեքենաների ու այլ մեխանիզմների էլեկտրոնային անձնագրերին, Եվրասիական տնտեսական միությունում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների սահմանմանը, Նավագնացության մասին համաձայնագրին, ԵԱՏՄ թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորմանը վերաբերող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԵՏՀ խորհուրդն ընդունել են որոշումներ տրանսպորտային միջոցների և ինքնագնաց մեքենաների ու այլ մեխանիզմների էլեկտրոնային անձնագրերի կատարելագործման վերաբերյալ, ինչպես նաև ԵԱՏՄ թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորման, ԵԱՏՄ-ում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների սահմանման հետ կապված խնդրահարույց հարցերի և Նավագնացության մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ընդունված որոշումների կատարման համար պատասխանատու են ԵԱՏՄ անդամ պետությունների համապատասխան գերատեսչությունները և ԵՏՀ-ը: Ակնկալվող արդյունքներն են գործող կարգավորումների բարելավումը, տրանսպորտի ոլորտում համագործակցության խորացումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.10.2024թ.